րանն[1], Ինջի–Սու[2], Ջէկէգրէկ[3], Աղսկէ, Ջիկուտ, Միւլք[4] եւ Ակջի գետերը, սրանց աւերակներն եւ եայլաները, որոնց շուրջը գտնւում են կալուածատէր իշխանների դղեակներն ու ամրոցները, որոնք պարզ ցոյց են տալիս, թէ նրանք շրջապատուած էին Ցուրէն–Շէհրիւ–Արքայական Ոստանին։ Ջերմեսը աւելի առաջ գնալով՝ ոռոգում է

---

Ցուրէն-Շէհերից ընդ ամէնը 2–3 վերստ հեռաւորութիւն ունի, հետեւաբար դա կազմում է նրա մասը կամ արուարձանը։

[1] Օրթա-Վերան կամ Օրթիս-Վերանը աւելի ընդարձակ աւերակներ ունի, բայց աւելի աղքատիկ վիճակ։ Գուցէ սա լինի Ցուրէն-Շէհերի չուկա-արհեստանոցը, որտեղ ապրում էին վարպետ արհեստաւորները իրենց արհեստանոցներով եւ ներդութիւն չէին պատճառում ազնուազարմ իշխան-նախարարներին իրենց աղմուկներով. չէին ապականում փափկասուն տիկինների շնչած օդը։

[2] Ինջի-Սու. Մարգարտի ջուր. երեւի այս անունը թարգմանել են թաթարները ռամկական կարգով։

[3] Ջէկէգրէկ՝ Ճորոխի Աւազանը բազմաթիւ եգրէկ–ագարակ գեղեր ունի, որոնք յաճախ որեւէ բառերով ածանցուած են։ Այս եգրէկ-ները ցոյց են տալիս, որ կալուածատէր-նախարարները կամ Ոստանիկները եւ կամ նոյնիսկ Սեպուհներնու ապահները ունեցել են իրենց ընդարձակ ագարակները, որոնք յատացրած են եղել, որոշ նիւթերի արտադրութեան։ Ցրխայի, Իչխանըլուըի (Իչխալըու ր) եւ խալխալի ձիթապտղի այգիները ցոյց են տալիս, որ նրանք հնումը աւելի խնամքով են կազմուած եղել եւ աւելի շատ բերք են տուել։

[4] Միւլք-Սեփհականութիւն. Այս բառը մտած պիտի լինի Սեմիտների շրջանում, ոչ ուշ Պարթեւ-Պահլաւ շրջանից։ Իսլամը խալիֆների շրջանում եւ ընդհանրապէս հակառակորդ էր Միւլքադարներին-Մալիքներին, քանի որ համայն կալուածները համարւում էին պետական համայնական սեփհականութիւն (Արազիի-ամիրէ)։